Զեմ գիտեր թէ ուրկէ՛ առնելով Արշակ Ալպոյաճեան կը գրէ. «1241ին կամ քիչ առաջ կը մեռնի Մարծպան» («Պատ. Հայաստանի Սահմանները», էջ 273)։ Իսկ հաւանաբար Աճառեանի «Անձնանուններու Բառարան»էն (Մարզպան, թիւ 1), ուր կ'ըսուի. «Արդէն մեռած էր 1241 թուին»։

Բարձրաքաշի ուրիշ մէկ արձանագրութեան մէջ, ՈՂԱ (1242) թուականու, կ'ըսուի. «...Ես Սէվճի ծառա Մարծպանս եւ ամուսին իմ...», ուր ոչ մէկ խօսք կայ Մարծպանի արդէն մեռած ըլլալուն մասին (Ցիշատ. 18)։

Ուրեմն Մարծպան կամ Մարզպան Բ որդի Սարգիս Ա–ի եւ եղբայր Սմբատ Բ–ի, ամուսնացած էր Մամքանի եւ անկէ ունէր չորս որդի՝ Գրիգոր, Ասլան բէկ, Սարգիս Բ եւ Ամիրա։ Կիրակոս Գանձակեցի Թաթարներու սովորութեանց մասին խօսած տեղն իր պատմութեան մէջ կ'ըսէ. «Զայս պատմեաց մեզ Գրիգոր իշխանն, որդի Մարզպանին, եղբայր Ասլան բէկին, Սարգսի եւ Ամիրային, յազգէ Մամիկոնէից, զոր իւր խսկ լուեալ էր ի մեծ առնէ միոջէ ի կարի աւագաց, որում անուր էր Ղութուննուին, յաւուր միում յուսուցանել նորա զմանկագոյնսն» (Կ. Մելիք–Օհանջանեան, էջ 272–273)։ Իսկ Կիրակոս խօսելով Քուրդ իշխանի մասին, կ'ըսէ. «Կին նորա Խորիշահ յազգէ Մամիկոնէից, դուստր Մարզպանայ՝ քոյր Ասլան բէկին եւ Գրիգորայ» (Անդ, էջ 365)։

ԽՈՐԻՇԱՀ

Մարծպան Բ–ի դուստրն է այս իշխանուհին, որ ամուսնացած էր Վաչէի որդի Քուրդ մեծ իշխանին։ Կիրակոս Գանձակեցի կը գրէ, երբ կը խօսի Հեթումի այցելութեան մասին առ Բաթու եւ Մանգու Խան Թաթարները. «Եկն (Հեթում) ի Կարս քաղաք։ Եւ տեսեալ զԲաչու–նուինն, որ զօրապետ էր Թաթար զօրուն՝ որ յԱրեւելս, եւ զայլ մեծամեծսն,, եւ պատուեալ ի նոցունց, զտեղի առ յոտն Արագածու՝ հանդէպ լերինն Արայի, ի գիւղն Վարդենիս, ի տանն իշխանին, զոր Քուրդ անուանէին, Հայ ազգաւ, կրօնիւք քրիստոնեայ, եւ որդիք իւր Վաչէ եւ Հասան, եւ կին նորա Խորիշահ՝ յազգէ Մամիկոնէից, դուստր Մարզպանայ՝ քոյր Ասլան բէկին եւ Գրիգորայ» (Մելիք–Օհանջանեան, էջ 364–365)։ Ասիկա կը հաստատէ Քուրդ իշխանի եւ Խորիշահի բարձրապատիւ ըլլալը։

Քուրդ որդի Վաչէի մեղի թողուցած է կարգ մը արձանագրութիւններ ուր կը յիշուի Խորիշահ վերջնոյս ծնողաց հետ։ Ասոնցմէ մին Ցովհաննավանքի ժամատան արձանագրութիւնն է, ուր կ'ըսուի. «Ցամի ՈՂԹ (1250)... եւ Քուրդ՝ որդի Վաչէի եւ ամուսին իմ Խորիշահ՝ դուստր Մարծպանս եւ Մամքանա, խնամաւքն Աստուծոյ հաճո եղեալ այլազգի զաւրացն նեռոզաց ...» (Ցիշատ. 17)։ Ի՞նչ էր Քուրդի կատարած ծառայութիւնը։ Անտարակոյս Թաթար բանակին արշաւանքներուն մասնակցած էր Բաչու–նուին հրամանատարութեան տակ։ Հաւանական է որ Թաթար բանակէն 1243ին Կարնոյ, Կեսարիոյ, Սեբաստիոյ եւ Երզնկայի գրաւման մասնակցած էր, երբ Թաթար բանակին մէջ բազմաթիւ Հայ իշխաններ կային իրենց զօրամասերով Բաչու–նուի հրամանատարութեան տակ։ Քուրդ իր ստացած աւարին բաժինը «դանձն իմ եղի ի վերա էկեղէցեաց Հայոց» կ'ըսէ։

Սանահինի վանքը, «դրսի դաւթի արեւմտեան պատին յենած մեծ խաչքարի ճակատին», կ'ըսէ Կարօ Ղաֆթաղարեան, կայ սա արձանագրութիւնը. «Նշան (դ) (Ա.)յ յաւգնեա Քրդի, Խորիշահի, և գաւ(ա)կաց նոցա» («Սա-